

Նոր կլենի դպրոցին մէջ, Այս յանգուզն խօս-  
քերը կարգացողը բնականաբար պիտի կարծէ,  
թէ ուրեմն այդ ինչ անիրաւ, յափշտակիչ, եկե-  
ղեցակողոպուտ, ինքնադուլս և ինքնահաւան հո-  
գարարձու է, որ վիճակաւոր առաջնորդաց և բո-  
լոր ժողովրդոց աչքին առջեւ՝ անոնց իրաւունք-  
ները իրեն սեպհականներ է, սրտին ուզած անիրա-  
ւութիւնները կրնէ, և միշտ անպատիժ կմնայ, բայց  
բարեմիտ ընթերցողին սիրտը և միտքը շուտով  
պէտք է հանդարտի՝ եթէ իմանայ անժխտելի փաս-  
տերով, թէ այն յանգուզն պարոնին ըսած խօս-  
քերը ծայրէ ի ծայր լի են ստույծեամբ, մասն զի,

Նախ՝ եթէ յօդուածին գրողը հայրենա-  
խօսքով այն կուզէ հասկըցնել՝ թէ Ագ. քիրմանի  
եկեղեցւոյն ու դպրոցին հոգաբարձութիւնը մեր՝  
Աստուածատրեան ազգատոհմին մէջ բաւական  
հին է, այդ ճշմարիտ է, մեր հանգուցեալ եղբայրը  
Մելգոն աղան 25 տարին աւելի այն պաշտօննե-  
րը կատարեց, և մենք կէս մը նորա հետ՝ և կէս  
մը նորա վախճանիէն ետքը՝ շարունակեցինք, Բայց  
ի՞նչպէս, Ոչ թէ անանուն պարոնին ըսած տիրա-  
պետական և անհաւատարիմ կառավարութեամբը,  
այլ անու ազգասիրական և անձնանուէր ջերմե-  
ռանդ և հաւատարիմ ծառայութեամբ՝ որ ար-  
դէն վկայեալ է ոչ թէ միայն ժամանակին հոգեւոր  
իշխանաւորներէն, այլ և Ագ. քիրմանի, և կրնամք  
ըսել բոլոր Պետարապիտ ժողովուրդներէն:

Երկրորդ, իրաւ է որ դպրոցին անշարժ կալուա-  
ծոց կառավարութիւնը մեր հանգուցեալ եղբորը  
ձեռքն էր, Բայց դպրոցին խանութը, որ կտակողին  
կամօքը ուղղակի յանձնուած էր մեր տնօրէնու-  
թեանը, 1867 ին նորէն յանձնուեցաւ մեզի միա-  
բան հաւանութեամբ ժողովրդոց քաղաքիս, ու-  
րեմն ի՞նչպէս կհամարձակի ըսել պարոնը՝ թէ  
մենք պարտաւոր ենք հարկէ դպրոցի կալուած-  
ները մեր յետագայ մեզ մեզիս որ ըսել է բնու-  
թեամբ տիրապետել և ինքնահաճոյ կերպով կա-  
ռավարել:

(Մեղեմն է յաջորդ հոգեւոր)

# ԲԻԻԶԱՆԴԵԱՆ ՍՈՒՐԷԱՆԴԱԿ.

Գերեզմանատան խնդիր: — Կրօնաց ղեմ հարածուէր: — Ընդհ.  
ժողով և Գանձաւարով ղեմ. Հայրապետի կողակէն համար: —  
Հեռագիր մը: — Աստուծական ժողով դատարարական և Կրօն.  
ժողով կրօնի դատարարական փութոյ:

Ահապէս Օգոստ. Սուլթան՝ Բերայի գերեզ-  
մանատան անիրաւ գրաւման համար Հոգեւորակա-  
նաց դասուն ի դիմաց տրուած աղերսագիրը ընդու-  
նեց սիրով, և հրամայեց որ ի դարուց հետէ Հա-  
յոց սեպհականութիւն եղածը՝ ոչ որ չէ կարող  
իշխել գրաւելու, հետեւարար այսուհետեւ ալ Հայ  
ազգին է, ինչպէս հաղորդեց մեծ Եպարքոս:

Մշտաբարաբար բոլոր եկեղեցիներէն Եպիսկո-  
պոս՝ Արդապետ ու Քահանայ հարկէր ասեմն ա-  
ւելի անձինքէն՝ Պէշկիմաշ Կայսերական պալատին  
առջեւ՝ երբ (Դեկտ. 22ին) կէսօրին աղօթելու  
կերթար Սուլթանն՝ ընդունեց վերոյիշեալ աղեր-  
սագիրը՝ որն որ կրօնական ժողովոյ Ատենապետ  
Գեր. Թադէոս Ս. Արքեպիսկոպոս ձեռքով բռնած էր:

Ասկէց վերջը խուռն բաղմութեամբ աղերսա-  
տուք եղան ի գերեզմանատուն, ուր հաւաքուեցան  
2—3 հազարի չափ ազգայինք, ու կրօնական հան-  
դէս մը կատարեցին:

Հոգեւորականք մատուցող մօտն ու զգեստա-  
ւորուեցան, և բոլոր գերեզմանատան մէջ թա-  
փօրով անդաստան ըրին ու տեառնագրեցին:

Բարեմաղթութիւններ ալ եղան:

Դեկտ. 28ին ալ նոյն գերեզմանատան Ս. Խոր-  
վիրապ մատուռին մէջ հանդիսաւոր պատարագ  
մատուց Պեր. Խորէն Եպիսկոպոս, ի ներկայու-  
թեան հաղարաւոր ազգայնոց, որ նախ քան զՍ.  
պատարագն՝ միշտ Աղգ. և Կրօն. իրաւանց ջատա-  
գով կանգնելու համար հրաւեր և ընտիր քարոզ  
մը խօսեցաւ առ ժողովուրդն:

Պատարագի աւարտմանէն յետոյ՝ ի յիշատակ  
հոգւոյ հոգեւոր տեառն մերոյ արժանայիշատակ և  
արդիւնաւոր Յակոբ Ս. Վաթուղիկոսի ամենայն  
Հայոց հանգուցեալ պաշտօն կատարուեցաւ, և նո-  
րին դամբարանին վերայ մեծ հանդէս եղաւ, ուր  
կրկին Գեր. Խորէն սրբազան լուսահոգւոյն սրբա-  
կենցաղ վարքը և յօդուած եկեղեցւոյ և ազգի մա-  
տուցած բաղմազգի բարիքները յիշելով, յորդորեց  
զժողովուրդն՝ որ Աղգ. և Կրօն. հալածմանց միջոցին



Բ-ԲԵՐԵ: Հանդիսացող անձանց տարեդարձը տօնեն և նոյնպիսեաց յարգն և արժանիքը չմոռնան:

Սակայն այսքանով պէտք է բաւականանալ. աշխատելու է յատուկ հրովարտական ապահովել կայսերական վերջին հրամանը, և ապա թէ միամտանալ՝ որ ի ժամանակին կրկին այնպիսի խնդիր յարուցանելու տեղիք չեն գտներ մի խառնակ միջոցի մէջ:

Այս անցից և դարձուածոց մէջ մատնիչները մեր մէջէն են, որ իրենց անձնական օգտից և փառաց համար կըրթնին ազգի և Եկեղեցւոյ պաշտօնի վայրերը բռնաբարել և մեր սեփականութիւնքը յափշտակել և զօհել այլոց:

\* \*

Լրագրաց դէմ հալածմունքները կշարունակեն: Հայրենի՝ չորս ամսուան, և Մահու երկու ամսուան համար դադարելու դատապարտուեցան՝ իրր թէ գերեզմանատան խնդրոյն մէջ ժողովուրդը զրգուի և ոմանց քաղ. պաշտօնէից դէմ գրել համարձակելուն համար:

Գարձնալ ազգայնոց ոմանց էնիքներուն կպահտին:

\* \*

Պեկ. 29 ին Անդհ. Երեսի. Ժողովոյ նիստը բացուեցաւ, և Ա. Ե. Հայրապետի Առնակը յանձնուեցաւ Մասնաժողովի մը, որ պիտի որոշէ ըստ առաջարկութեան Առնակին՝ ինչ որ արժան է:

Յանձնաժողովոյ անդամքն են.

Ներսէս Ս. Եպիսկոպոս

Խորէն „

Մամբրէ Արդապետ Բաղիշոյ.

Մատթէոս „ Իզմիրլեան

Սահակ Քահանայ Միջագիւղի

Յովհաննէս „ Մկրեան

Ստեփան Բաշայ Երզնան

Յովակիմ Էֆէնտի Յովհաննէսեան

Օգոէն „ Խոճասարեան

Յարութիւն „ Մէլրէմգուլեան

Խաղէոս „ Պէկեան

Պողոս „

\* \*

Նոյն ժողովոյն մէջ բաւական մեծ յուզմանց տեղի տուաւ Ս. Պատրիարքին մէկ հետադիւր՝ որ Երուսաղէմի Պատրիարք Եսայի Ս. Երբ Եպիսկոպոսի ուղղը է՝ որ Լատինաց թոյլ տայ Պատարագ մատուցանել Ս. Յակոբայ տաճարին մէջ:

Այս խնդրոյս համար ինն երեսփոխանք հարցում մը ուղղած էին Անդհ. Ժողովոյն, որուն դէմ անարգանք պատասխանեց Ամեն. Պատրիարքը, իրր թէ իր գիտնալու բանն է՝ նոյն հետադրին վերայ տեղեկութիւն տալը կամ չտալը: Ի վերջոյ զիջաւ Քաղ. Ժողովին հաղորդել ըստ տրամադրութեան Սահմանադրութեան, թայց ցարդ ոչ Քաղ. ոչ Արօն. և ոչ Խառն Ժողովոյն տեղեկութիւն մը չը տուաւ, և զինքն հիւանդ կկեղծէ:

\* \*

Ուսումնական ժողովը բաւական ուշադրութիւն տուած է դաստիարակութեան խնդրոյն և վարժարանաց վիճակին վերայ, թայց ցարդ աւելի արդիւնք չարտադրուեցաւ:

Արօն. Ժողովը մեծ ուշադրութիւն դարձուց Արօնական դաստիարակութեան վերայ, և մի ցանկ շինեց, որ նորա մէջ նշանակեալ անձինք պիտի կրօնի վերաբերեալ դասեր տան մայրաքաղաքիս և արուարձանաց երկսեռ ուսումնարանաց մէջ:

Խ. Ս. ՀԱՅՆ. . . .

1875 Յունիս 2 է Կ. Պօլիս.

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ.

Ներկայ ամսագրով Երարատ մուտ գործեց ի Օ. շրջան:

Երարատ ամսագրոյս զիրքը, պայմանքը և պարունակութեանց ծրագիրը անփոփոխ մնացած են, միայն երբեմն պատկերազարդ լինելով:

Հանդերձ ծախուքն ճանապարհի տա. բեկան բաժանորդագրինն է ի Ուսաստան շրջ. մանէթ, ի Տաճկաստան էրէֆ արծաթ մէծիտ, ի Պարսկաստան Հէնք մանէթ և ի Հնդկաստան փէյ ռբլ. որ և կանխավաճար պէտք է լինի:

Տպարանական Յանձնախումբս կիութայ խնդրել Վարձակալներէն, ինչպէս նաեւ թւում. Ետեաններէն և Հոգևոր Առաջադրութիւններէն, որպէս զի թէ Երարատ ամսագրոց, թէ այլ և այլ մասունից և թէ գործոց Վ. Ի. Ն. Բ. (Դրամ. Դէրը) ուղղակի յղեն յանուն Սինօգի: